

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2022 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար

Բագրատ Զաքարյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2022թ ապրիլի 18-ի թիվ 36-Ա որոշմամբ

Մեղրի 2022թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	5
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)	7
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022Թ. ԾՐԱԳԻՐԸ ОШИБКА! ЗАКЛАДКА НЕ ОПРЕДЕЛЕНА.	
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ	44
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ.....	46

Ներածություն

Մեղրի համայնքի 2022թ. տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

Մեղրի համայնքի 2022թ. ՏԱՊ-ը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանում են 2022թ. Մեղրի համայնքում ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղությունները և խթանները:

ՏԱՊ-ում ներկայացվում է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը՝ պլանավորված գործընթացները և գործողությունները:

ՏԱՊ-ում նախատեսված ծրագրերի ֆինանսավորման պլանը սահմանում է ֆինանսավորման այն աղբյուրները, որոնք պետք է ապահովեն դրանց իրականացումը:

ՏԱՊ-ի իրականացման արդյունավետությունը նախատեսվում է իրագործել ըստ մոնիթորինգի և գնահատման պլանի՝ տարեկան կտրվածքով:

Այժմ ներկայացնում համայնքի 2022 թվականի աշխատանքային պլանը ըստ ոլորտների.

Ընդհանուր բնույթի ծառայություններ և ապարատի պահպանում

1.ՏԻՄ լիազորությունների իրականացման շրջանակներում բնակչությանը մատուցվող ծառայությունների արդյունավետ կառավարման, մատչելիության և հասանելիության ապահովման, տեղեկատվության ապահովման և իրազեկվածության մակարդակի բարձրացման, սպասարկման որակի բարելավման, աշխատակազմի պահպանման և արդյունավետության բարձրացման համար 2022թ-ին նախատեսվում է տրամադրել **161 793 600 ՀՀ դրամ**:

Քաղաքաշինություն և հանրային ենթակառուցվածքներ

2022 թ ՏԱՊ-ով նախատեսվում է կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը: Այս ուղղությամբ նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ **100 575 900 ՀՀ դրամի** ներդրում: Ենթակառուցվածքների զարգացման համատեքստում հարկ է առանձնացնել հետևյալ ծրագրերը.

1.Մեղրի քաղաքի Կասկադի հիմնանորոգում և բարձրահարկ շենքերի հարևանությամբ խաղահրապարակի կառուցման ավարտական աշխատանքների իրականացում:

2.Վանք-Կալեր գյուղեր տանող կամուրջի վերակառուցում:

Կոմունալ ծառայություններ

Կոմունալ ծառայությունների ոլորտում նախատեսվում է **214 215 000 ՀՀ դրամի** ներդրում, որի շրջանակներում կիրականացվեն բարեկարգման, կանաչապատման, սանիտարական մաքրման և աղբահանության, փողոցային լուսավորության ապահովման, առուների մաքրման աշխատանքներ:

Տրանսպորտ

Այս ուղղությամբ նախատեսվում է **24 785 000 ՀՀ դրամի** ներդրում: Կիրականացվի միջհամայնքային տրանսպորտային ցանցի բարելավում, համալրում նոր միկրոավտոբուսով և կապահովվի հանրային տրանսպորտի շարունակական շահագործումը՝ հանրային տրանսպորտի համակարգում ներառելով սահմանամերձ Նոնաժոր բնակավայրը: Համալրված ավտոպարկը թույլ կտա առավել ինտենսիվ կապ ապահովելու բնակավայրերի միջև՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Տնտեսություն

Տնտեսության զարգացման ուղղությամբ նախատեսվում է տարամղել **201 740 000 ՀՀ դրամ**: Կձեռնարկվեն քայլեր գյուղատնտեսության զարգացման, համայնքային բյուջեում եկամուտների ավելացման և համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման ուղղությամբ: Առանձնակի ուշադրություն կդարձվի հետևյալ ծրագրերին և միջոցառումներին.

1. 2019թ. սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Մեղրիի մաքսակետին կից կառուցված կայանատեղիի շահագործում, վճարման և օգտագործման պայմանների, սակագների սահմանում, ինչը ուղևորային մեծ հոսքի դեպքում ենթադրում է համայնքային բյուջեի լրացուցիչ եկամուտներ:

2. Եվրասիական Զարգացման Բանկի համաֆինանսավորմամբ Շվանիժոր, Ալվանք, Ագարակ բնակավայրերում իրականացվող ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքների ավարտում:

3. Մեղրիի ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում:

4. Մեղրի քաղաքի մանկապարտեզի շենքում արևային պանելների տեղադրում:

Կրթություն, սպորտ, մշակույթ և հանգիստ

Այս ոլորտում 2022թ. ներդրումների նախատեսվող թիվը կազմում է **436 339 100 ՀՀ դրամ**, որով պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները և ծրագրերը.

1. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում:

2. Արտադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում:

3. Ավարտել Ագարակ քաղաքի նախկին կաթսայատան հիմքի վրա մարզադպրոցի կառուցման շինաշխատանքները:

4. Որակյալ նախադպրոցական կրթության շրջանակներում նախատեսվում է ավարտին հասցել Մեղրիի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման 1-ին և 2-րդ փուլերի իրագործումը:

5. Մարզամշակույթային կյանքի կազմակերպում և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ:

Սոցիալական պաշտպանություն

Կշարունակվի համագործակցությունը սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ: Կիրականացվեն սոցիալապես խոցելի խմբերի աջակցությանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ և դրամական հատկացումներ: Այս ուղղությամբ նախատեսվել է **6 000 000 ՀՀ դրամի** ծախս:

Փրկարար ծառայություն

Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ուղղությամբ նախատեսվել է **2 000 000 ՀՀ դրամի** ծախս:

Վերը նշված ծրագրերը նախատեսվում է իրականացնել ինչպես համայնքային բյուջեի, այնպես էլ դոնոր կազմակերպությունների և պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Մեղրին բազմաբնակավայր, զարգացած ենթակառուցվածքներով, բարեկարգ համայնք է՝ զարգացած գյուղատնտեսությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, որտեղ բնակչությանը մատուցվում են բարձրակարգ հանրային ծառայություններ, իսկ բնակիչները ձևավորել են ամուր քաղաքացիական հասարակություն:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	4%	4%
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	30.3	44.8
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	12462	12500
Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը կապիտալ ծրագրերի ուղղությամբ	202 770 697	228 700 000
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը	355	355

- ✓ Ելակետային արժեքը համապատասխան ցուցանիշի՝ ՏԱՊ-ի ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքն է:
- ✓ Թիրախային արժեքը համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն այն արժեքը, որին կհասնի համայնքը ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:
- ✓ Ցուցանիշների ցանկը սպառիչ չէ և կարող է լրացվել ըստ համայնքի առանձնահատկությունների և հայեցողության:

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի ծառայություններ և ապարատի պահպանում - Ապահովել տեղական ինքնակառավարումը Մեղրի բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ - Կազմակերպել համայնքային գույքի, կառավարումը, նպատակային օգտագործումը	Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հասցեական, մասնակցային և ուղենշված գործունեություն, % Համայնքային գույքի արդյունավետ կառավարում%	80 75	82 77
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և հանրային ենթակառուցվածքներ: Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի	Համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի	70	75

պահպանումն ու զարգացումը	բարելավված վիճակը, %		
Ոլորտ 3. Կոմունալ ծառայություններ: - Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը - Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ - Փողոցային լուսավորության ապահովում բոլոր բնակավայրերում	Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը, % Հանրային տարածքների մաքրության աստիճանը, % Համայնքի կանաչապատ հատվածների ընդլանում % Լուսավորված փողոցներ %	75 75 55 40	80 80 60 40
Ոլորտ 4. Տրանսպորտ: Կազմակերպել համայնքի միջբնակավայրային կանոնավոր ուղևորափոխադրումները և բարձրացնել դրանց ինտենսիվությունը	Հասարակական տրանսպորտի հասանելիությունը բնակավայրերում %	95	100
Ոլորտ 5. Տնտեսություն: - Նպաստել այգեգործության զարգացմանը և համայնքային բյուջեի եկամուտների ավելացման - Էներգասպառման ծախսերի կրճատում և էներգաարդյունավետության մակարդակի բարձրացում	Ոռոգվող և մշակվող հողամասերի ավելացում % Էներգաարդյունավետության և էներգախնայողության մակարդակի բարձրացում%	70 10	80 20
Ոլորտ 6. Կրթություն, սպորտ, մշակույթ և հանգիստ: - Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ - Կազմակերպել համայնքի մարզական և մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը - Կազմակերպել համայնքի մարզամշակութային կազմակերպությունների և երիտասարդների հետ տարվող աշխատանքը:	Նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության որակը % Արտադպրոցական կրթության ծառայության որակը % Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը, % Մշակութային կազմակերպությունների ծառայությունների բարելավում%	55 60 35 55	85 70 40 60
Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն: Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը	Սոցիալական աջակցություն ստացող անապահով ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ %	4	4
Ոլորտ 8. Փրկարար ծառայություն Աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումներ	Աղետների ռիսկերի նվազեցում%	5	10

2. Համայնքի 2022 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի ծառայություններ և ապարատի պահպանում			
1.1.	Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում	6535,0	Բոլոր բնակավայրերում
1.2.	Համայնքի աշխատակազմի (ապարատի) պահպանում	143369,6	Բոլոր բնակավայրերում
1.3.	Համայնքի կենտրոնից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում, սպասարկման որակի բարելավում	8839,0	Մեղրի բնակավայր
1.4.	Համայնքային գույքի կառավարում	3050,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		161793,6	
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և հանրային ենթակառուցվածքներ			
2.1.	Խաղահրապարակի հիմնում և Կասկադի կապիտալ հիմնանորոգում Մեղրի քաղաքում	52035,4	Մեղրի բնակավայր
2.2.	Վանք-Կալեր գյուղեր տանող կամուրջի վերակառուցում:	48540,5	Վարդանիձոր բնակավայր
Ընդամենը		100575,9	
Ոլորտ 3. Կոմունալ ծառայություններ			
3.1.	Հանրային հատվածների բարեկարգում	49365,0	Բոլոր բնակավայրերում
3.2.	Կանաչապատ տարածքների ընդլայնում	4838,0	Բոլոր բնակավայրերում
3.3.	Փողոցային լուսավորության ապահովում	22943,5	Բոլոր բնակավայրերում
3.4.	Աղբահանության ծառայության մատուցում	105939,5	Բոլոր բնակավայրերում
3.5.	Սանիտարական մաքրում	31129,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		214215,0	
Ոլորտ 4. Տրանսպորտ			
4.1.	Միջբնակավայրային հասարակական տրանսպորտի ապահովում	24785,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		24785,0	

Ոլորտ 5. Տնտեսություն			
5.1.	Ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքների ավարտում:	196440,0	Շվանիձոր, Ալվանք, Ագարակ բնակավայրեր
5.2.	2019թ. սուբվենցիոն ծրագրով Մեղրիի մաքսակետին կից կառուցված կայանատեղիի շահագործում, վճարման և օգտագործման պայմանների, սակագների սահմանում	0,0	Ագարակ բնակավայր
5.3.	Մեղրիի ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում:	5300,0	Մեղրի բնակավայր
5.4.	Արևային վահանակների տեղադրում Մեղրի քաղաքի մանկապարտեզում	0,0	Մեղրի բնակավայր
Ընդամենը		201740,0	
Ոլորտ 6. Կրթություն, սպորտ, մշակույթ և հանգիստ			
6.1.	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	165411,8	Մեղրի, Ագարակ, Կարճևան, Լեհվազ, Վարդանիձոր բնակավայրեր
6.2.	Արտադպրոցական կրթության ծառայության մատուցում	73270,0	Մեղրի, Ագարակ
6.3.	Մարզադպրոցի կառուցման աշխատանքների ավարտում	113512,2	Ագարակ բնակավայր
6.4.	Մանկապարտեզի շենքի հիմնանորոգման 1-ին և 2-րդ փուլերի աշխատանքների ավարտում	42645,1	Մեղրի բնակավայր
6.5.	Մարզամշակութային կյանքի կազմակերպում և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	41500,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		436339,1	
Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն			
7.1.	Սոցիալական աջակցություն անապահով խմբերին	6000.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		6000.0	
Ոլորտ 8. Փրկարար ծառայություն			
8.1.	Աղետների ռիսկերի նվազեցում	2000.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		2000.0	
Ընդհանուր		1147448,6	

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի ծառայություններ և ապարատի պահպանում					
Ոլորտի նպատակ. 1. Ապահովել տեղական ինքնակառավարումը Մեղրի բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ 2. Կազմակերպել համայնքային գույքի, կառավարումը, նպատակային օգտագործումը	Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հասցեական, մասնակցային և ուղենշված գործունեություն, 82% Համայնքային գույքի արդյունավետ կառավարում 77%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	-
Ծրագիր 1.1. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում					
Ծրագրի նպատակ. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում	ՏԻՄ-երի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բարելավվել է 78%	Հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք	Աշխատակազմի քարտուղար	1 տարի	-
Միջոցառումներ. 1. Համակարգչային ծառայությունների ձեռք բերում 2. Մասնագիտական և այլ ծառայությունների ձեռք բերում	Ելքի ցուցանիշներ ▪ Ծրագրային թարմացումներ -3 ▪ Հարկերի հաշվառման և հաշվարկման արդյունավետության մակարդակի բարձրացում- 15% ▪ Չափագրվող և պետական գրանցման ենթակա գույքային միավորների թիվը 180 Մուտքի ցուցանիշներ ▪ Համակարգիչների թիվը-3 ▪ Աշխատակիցների թիվը-3 ▪ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 6535.0 հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե՝ 6535.0 հազ.դրամ	Մեղրիի համայնքապետարան, «ՏՀԶՎԿ», ՀԿ, «Վեկտոր պլյուս»ՍՊԸ, ՀԾ			

Ծրագիր 1.2. Համայնքի աշխատակազմի պահպանում					
Ծրագրի նպատակ. Օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների պատշաճ իրականացում համայնքում	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 82%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Աշխատակազմի քարտուղար	1 տարի	-
Միջոցառումներ. 1. Մեղրի համայնքի աշխատակազմի պահպանություն՝ առանց բնակավայրերի վարչական ղեկավարների պահպանման ծախսերի 2. Ագարակ բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 3. Նոնաձոր բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 4. Շվանիձոր բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 5. Ալվանք բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 6. Կարճևան բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 7. Լեհվազ բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 8. Վարդանիձոր բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 9. Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 10. Տաշտուն բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում	Ելքի ցուցանիշներ ▪ Ավագանու նիստերի թիվը -14 ▪ Վերապատրաստված աշխատակիցների թիվը - 8 ▪ Բնակավայրերի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների հասանելիությունն ավելացել է 2%-ով Մուտքի ցուցանիշներ ▪ Աշխատակիցների թիվը համայնքի կենտրոնում- 49 ▪ Աշխատակիցների թիվը բնակավայրերում - 19 ▪ Համայնքի կենտրոն բնակավայրի աշխ. պահպանման ծախսեր – <u>104339.6</u> հազ. դրամ ▪ 9 բնակավայրերում վարչական ղեկավարի պահպանման ծախսեր- <u>17520.0</u> հազ. դրամ ▪ Գրասենյակային կահույքի և սարքավորումների ձեռքբերում՝ <u>1000.0</u> հազ.դրամ ▪ Պահպանման ընթացիկ ծախսեր՝ <u>20510.0</u> հազ. դրամ, համայնքի բյուջե ▪ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ <u>143369.6</u> հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե՝ <u>143369.6</u> հազ դրամ	Մեղրիի համայնքապետարան			
Ծրագիր 1.3. Համայնքի կենտրոնից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում, սպասարկման որակի բարելավում					

Ծրագրի նպատակ. ՏԻՄ աշխատակազմի կողմից մատուցվող ծառայությունների ապահովում	ՏԻՄ-երի կողմից բնակիչներին սպասարկման արագությունը և որակը-75%	ՔՍԳ և ՔԿԱԳ հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք	Աշխատակազմի քարտուղար	1 տարի	
Միջոցառումներ. 1. ՔՍԳ աշխատանքների կազմակերպում 2. ՔԿԱԳ ծառայության մատուցում	Ելքի ցուցանիշներ ▪ ՔՍԳ կողմից մատուցվող ծառայությունների թիվը -10 ▪ ՔԿԱԳ ակտերի թիվը - 800 Մուտքի ցուցանիշներ ▪ Համակարգիչների թիվը-7 ▪ Աշխատակիցների թիվը-5 ▪ ՔՍ գրասենյակ-1 ▪ ՔԿԱ գրասենյակ-1 Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 8839,0 հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե՝ 8839,0 հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան			
Ծրագիր 1.4. Համայնքային գույքի կառավարում					
Ծրագրի նպատակ Համայնքային գույքի արդյունավետ և նպատակային կառավարում	Համայնքի գույքի կառավարումից առաջացած եկամուտների ավելացում- 5%	Աճուրդների արձանագրություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	
Միջոցառումներ. Համայնքի հողատարածքների և գույքի աճուրդ վաճառք համաձայն գույքի օտարման 2022թ. ծրագրի	Ելքի ցուցանիշներ ▪ Ակնկալվող եկամուտ – 30000.0 հազար դրամ ▪ Համայնքի գույքի կառավարման արդյունավետության աճ – 2% ▪ Չափագրվող և պետական գրանցման ենթակա գույքային միավորների թիվը՝ 180 Մուտքի ցուցանիշներ Օտարվող համայնքային հողեր՝ 104 հողակտոր Մասնագիտական և այլ ծառայություններ՝ 3050.0 հազ. դրամ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 3050,0 հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե՝ 3050,0 հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան			

Ոլորտ 2. Քաղաքաշինություն և համայնքային ենթակառուցվածքներ					
Ոլորտի նպատակներ. Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը	Համայնքային ենթակառուցվածքների, հանրային վայրերի բարելավված վիճակը, 75%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	
Ծրագիր 2.1. Խաղահրապարակի հիմնում և կասկադի կապիտալ հիմնանորոգում Մեղրի քաղաքում					
Ծրագրի նպատակ. - Բարելավել Մեղրի համայնքի բնակչության, զբոսաշրջիկների հանգստի պայմանները - Բարձրացնել Մեղրի քաղաքի արտաքին տեսքի գրավչությունը - Նպաստել երեխաների բացօթյա հանգստի, ֆիզիկական ակտիվության և առողջ կենսակերպի կազմակերպմանը	- Մեղրի համայնքի բնակչության, զբոսաշրջիկների հանգստի պայմանները բարելավվել են, Մեղրին գրավիչ է տեղաբնակների և այցելուների համար - Բնակիչներն ունեն ժամանցի, հանգստի և ֆիզիկական ակտիվության կազմակերպման նոր հնարավորություն	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջոցառումներ. - Կասկադի բարեկարգման աշխատանքների իրականացում - Խաղահրապարակի կառուցապատման աշխատանքների իրականացում	Ելքի ցուցանիշներ - Կառուցապատման տևողություն- 7 ամիս - Բնակիչների կարծիքը իրականացված աշխատանքի վերաբերյալ- բավականին լավ - Բարեկարգ կասկադի և նոր խաղահրապարակի առկայություն-առկա է Մուտքի ցուցանիշներ - Կապալային աշխատանքների կատարման պայմանագիր – 2 - Ծրագրի ընդհանուր արժեքը – <u>52035,4</u> հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե - <u>28517,5</u> հազ. դրամ պետական բյուջե - <u>23517,9</u> հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	
Ծրագիր 2.2. Վանք-Կալեր գյուղեր տանող կամուրջի վերակառուցում					

Վանք-Կալեր գյուղեր տանող կամուրջի վերանորոգում:	Ելքի ցուցանիշներ - Երթևեկության անվտանգություն – առկա է - Բարեկարգված կամուրջ -1 - Գյուղատնտեսության զարգացում 5% Մուտքի ցուցանիշներ - Վանք-Կալեր կամուրջ -1 - Կապալառու պայմանագիր 1 - Սուբվենցիա-1 - Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ <u>48540,5</u> հազ. դրամ, որից՝ Համայնքի բյուջե-<u>21843,2</u> հազ. դրամ Պետական բյուջե-<u>14317,3</u> հազ. դրամ Այլ ներդրող- <u>12380,0</u> հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Կապալառուի ձախողումներ
Ոլորտ 3. Կոմունալ ծառայություններ					
Ոլորտի նպատակներ. - Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը - Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ	- Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը, 80% - Հանրային տարածքների մաքրության աստիճանը, 80% - Համայնքի կանաչապատ հատվածների ընդլայնում 60%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	-
Ծրագիր 3.1. Հանրային հատվածների բարեկարգում					
Ծրագրի նպատակ. Պահպանել, բարեկարգել և ընդլայնել համայնքի հանրային հատվածները	Բարեկարգ հանրային հատվածներ 75%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	-
Միջոցառումներ. Հանրային հատվածների բարեկարգում	Ելքի ցուցանիշներ - Հանրային հատվածների ընթացիկ բարեկարգում-5000 քմ Մուտքի ցուցանիշներ - Աշխատակիցների թիվը -10	Մեղրիի համայնքապետարան			

	▪ Տեխնիկական միջոցներ -10 միավոր ▪ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 49365,0 հազ. դրամ, որից՝ համայնքային բյուջե՝ 49365,0 հազ. դրամ				
Ծրագիր 3.2. Կանաչապատ տարածքների ընդլայնում					
Ծրագրի նպատակ. Պահպանել համայնքի հանրային և կանաչապատ հատվածները	Կանաչապատ հանրային հատվածներ 60%	Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ	և Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	-
Միջոցառումներ. Հանրային կանաչապատ տարածքների պահպանում և ընդլայնում	Ելքի ցուցանիշներ ▪ Կանաչ տարածքների ընդլայնում -10% Մուտքի ցուցանիշներ ▪ Աշխատակիցների թիվը -10 ▪ Տեխնիկական միջոցներ -9 միավոր Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 4838,0 հազ. դրամ, որից՝ համայնքային բյուջե՝ 4838,0 հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան			
Ծրագիր 3.3. Փողոցային լուսավորության ապահովում					
Ծրագրի նպատակ. Համայնքային ենթակառուցվածքների զարգացում	▪ Լուսավորված փողոցներ - 40%	Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ	և Համայնքի ղեկավար	1 տարի	-
Միջոցառումներ. 1. Փողոցային լուսավորության ցանցի սպասարկում	Ելքի ցուցանիշներ ▪ Լուսավորվող փողոցների քանակը – 23 ▪ Լուսավորության շնորհիվ ճանապարհային վթարների նվազում 60% Մուտքի ցուցանիշներ ▪ Աշխատակից – 3 մարդ ▪ Տրանսպորտային միջոց -1 միավոր ▪ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 22943,6 հազ. դրամ, որից համայնքի բյուջե 22943,6 հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան			
Ծրագիր 3.4. Աղբահանության ծառայության մատուցում					

Ծրագրի նպատակ. Մաքուր համայնք բնակիչների համար	Մաքուր համայնք 80%	Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ	«Մեղրիի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն	1 տարի	-
Միջոցառումներ. 1. Սպասարկում նոր ծեռքերված աղբատար մեքենաների և աղբամանների միջոցով 2. «Մեղրիի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ -ի կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնում 3. Աղբահանության սխեմայի, ժամանակացույցի կազմում և հաստատում 4. Աղբի տեղափոխում Մեղրի համայնքի աղբավայր	Ելքի ցուցանիշներ - Աղբատար մեքենա-4 - Աղբամաններ-300 - Աղբահանությունից օգտվող բնակիչների թիվը -12462 - Աղբամանների ախտահանում – ամսական 1 անգամ - Աղբահանության ծառայության որակի բարելավում- 15% Մուտքի ցուցանիշներ - Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 16 - Տեխնիկական միջոցներ – 6 - Աղբահանության համար գանձման ենթակա վճարների գումարը - Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 105939,5 հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ 105939,5 հազ. դրամ	«Մեղրիի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ			
Ծրագիր 3.5. Սանիտարական մաքրում					
Ծրագրի նպատակ. Մաքուր համայնք բնակիչների համար	Սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն 80%	Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ	«Մեղրիի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն	1 տարի	-
Միջոցառումներ. 1. Սանիտարական մաքրում 2. Սանիտարական մաքրման սխեմայի, ժամանակացույցի	Ելքի ցուցանիշներ - Համայնքի սանմաքրման ապահովում-80% Մուտքի ցուցանիշներ - Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 16	«Մեղրիի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ			

կազմում և հաստատում		Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 31129,0 հազ. դրամ Համայնքի բյուջե՝ <u>31129,0</u> հազ. դրամ				
Ոլորտ 4. Տրանսպորտ						
Ոլորտի նպատակներ. Կազմակերպել համայնքի միջբնակավայրային կանոնավոր ուղևորափոխադրումները		Հասարակական տրանսպորտի հասանելիությունը բնակավայրերում 85%		Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ և Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Տրանսպորտի մատակարարման ուշացումներ
Ծրագիր 4.1. Միջբնակավայրային տրանսպորտի ապահովում						
Ծրագրի նպատակ. Միջբնակավայրային հասարակական տրանսպորտի կանոնավոր աշխատանքի ապահովում		Ապահովվել է բնակավայրերի և համայնքային կենտրոնի միջև կանոնավոր ուղևորափոխադրումներ 95%		Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ և Համայնքի ղեկավարի տեղակալ	Օրվա մեջ երթերի քանակը 2	Չվացուցակի ապահովում
Միջոցառումներ. 1. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև ուղևորափոխադրումների կզմակերպում		Ելքի ցուցանիշներ ▪ Սպասարկվող բնակավայրեր -13 ▪ Ներհամայնքային տրանսպորտից օգտվողների քանակը /շաբաթական/ -840 ▪ Մեղրի և Ագարակ բնակավայրերի արվեստի դպրոցների սաների թվի ավելացում 11 բնակավայրերից 20% ▪ Կանոնավոր սպասարկման մակարդակը – 85% Մուտքի ցուցանիշներ ▪ Վարորդների թիվը -7 ▪ Տրանսպորտային միջոցների թիվը – 7 ▪ Կանգառների թիվը - 14 ▪ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 24785,0 հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե <u>24785,0</u> հազ. դրամ		Մեղրիի համայնքապետարան		
Ոլորտ 5.Տնտեսություն						
1.Ոլորտի նպատակներ		▪ Ոռոգվող և մշակվող հողամասերի ավելացում 80% ▪ Էներգաարդյունավետության մակարդակի բարձրացում 20%		Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ և Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	
▪ Մշակվող հողատարածքների ընդլայնում և իրացվող գյուղմթերի ծավալի աճ						

Էներգասպառման ծախսերի կրճատում և Էներգաարդյունավետության մակարդակի բարձրացում					
Ծրագիր 5.1. Ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքներ (Ալվանք, Ագարակ, Շվանիձոր)					
Ծրագրի նպատակ. Մշակվող հողատարածքների ընդլայնում և իրացվող գյուղմթերի ծավալի աճ	Բարելավված ոռոգման ցանց 20%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	
Միջոցառումներ 1. Ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքներ	Ելքի ցուցանիշներ - Վերանորոգված ոռոգման ցանց Շվանիձոր, Ալվանք, Ագարակ բնակավայրերում - Ոռոգվող և մշակվող հողերի ընդլայնում Մուտքի ցուցանիշներ - Դոնոր կազմակերպություններ -1 - Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ <u>196 440.0</u> հազ. դրամ, այդ թվում՝ Եվրասիական Ջարգացման Բանկ՝ <u>196 440.0</u> հազ. դրամ - համայնքի բյուջե - <u>0.00</u> հազ.դրամ	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Ֆինանսական և մարդկային ռեսուրսների անբավարար քանակ
Ծրագիր 5.2. 2019 թվականի սուբվենցիոն ծրագրով Մեղրիի մաքսակետին կից կառուցված կայանատեղիի շահագործում, վճարման և օգտագործման պայմանների, սակագների սահմանում					
Ծրագրի նպատակ. Նպաստել համայնքի եկամուտների աճին և երթևեկության կանոնակարգմանը	- Համայնքի եկամուտների աճ 0,2 %-ով - Երթևեկության բարելավում 5%-ով	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջոցառումներ 2019թ. սուբվենցիոն ծրագրով Մեղրիի մաքսակետին կից կառուցված կայանատեղիի շահագործում, վճարման և օգտագործման պայմանների, սակագների սահմանում	Ելքի ցուցանիշներ - Կայանատեղի -1 –առկա է - Երթևեկության բարելավում և կանոնակարգվածության բարձրացում 5%-ով: - Համայնքի բյուջեում եկամուտների աճ տարեկան 1 մլն. ՀՀ դրամով :	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Կայանատեղի կառավարման և կազմակերպման դժվարություն

	Մուտքի ցուցանիշներ ▪ Մասնավոր հատվածի հետ համագործակցություն-1 ▪ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 0.0 հազ. դրամ, այդ թվում՝				ներ փորձի բացակայությամբ պայմանավորված
Ծրագիր 5.3. Մեղրիի ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում					
Ծրագրի նպատակ. Մշակվող հողատարածքների ընդլայնում և իրացվող գյուղմթերի ծավալի աճ	Բարելավված ոռոգման ցանց 20%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	
Միջոցառումներ Ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքներ	Ելքի ցուցանիշներ ▪ Վերանորոգված ոռոգման Մեղրի բնակավայրերում ▪ Ոռոգվող և մշակվող հողերի ընդլայնում 5% Մուտքի ցուցանիշներ ▪ Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 5300.0 հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե- 5300.00 հազ.դրամ	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Ֆինանսական և մարդկային ռեսուրսների անբավարար քանակ
Ծրագիր 5.4.Արևային վահանակների տեղադրում Մեղրի քաղաքի մանկապարտեզում					
Ծրագրի նպատակ. ▪ Էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակի բարձրացում ▪ Նպաստել ծախսարդյունավետ կերպով նախադպրոցական կրթության կազմակերպմանը	Էներգասպառման ծախսերի կրճատում և էներգախնայողության մակարդակի բարձրացում 20%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ		1 տարի	
Միջոցառումներ Արևային պանելների ներդրում Մեղրի բնակավայրերի մանկապարտեզում	Ելքի ցուցանիշներ ▪ Էներգախնայողության մակարդակի բարձրացում 20%-ով: Մուտքի ցուցանիշներ ▪ Տեղադրման աշխատանքներ Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 0,0 հազ. դրամ	հաշվետվություններ, մոնիթորինգ	Համայնքի ղեկավարի տեղակալ		

Ոլորտ 6. Կրթություն, սպորտ, մշակույթ և հանգիստ					
Ոլորտի նպատակ. Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ	Նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության որակը 85% Արտադպրոցական կրթության ծառայության որակը 70% Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը 40% Մշակութային կազմակերպությունների ծառայությունների բարելավում 60%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	-
Ծրագիր 6.1. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում					
Ծրագրի նպատակ. Նախադպրոցական որակյալ կրթության կազմակերպում	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության որակի բարելավում 30%-ով	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	«Մեղրի համայնքի մանկապարտեզ», «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ -ի տնօրեններ	1 տարի	-
Միջոցառումներ. «Մեղրի համայնքի մանկապարտեզ», «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ պահպանություն - Կրթական և դաստիարակչական ուսուցման բարելավում	Ելքի ցուցանիշներ - Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 419 - Սննդի ապահովումը օրվա ընթացքում – 3 անգամ - Կրթական և դաստիարակչական բաղադրիչը ընդհանուրի մեջ – 70% Մուտքի ցուցանիշներ - Աշխատակիցների թիվը – 96 - ՀՈԱԿ-2 - Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 165411,8 հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ 165411,8 հազ. դրամ	«Մեղրի համայնքի մանկապարտեզ», «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ	«Մեղրի համայնքի մանկապարտեզ», «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ -ի տնօրեններ	1 տարի	
Ծրագիր 6.2. Արտադպրոցական կրթության ծառայության մատուցում					

Ծրագրի նպատակ. Արտադարձողական որակյալ կրթության կազմակերպում	Մատուցվող արտադարձողական կրթության ծառայության որակի բարելավում 10%-ով	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	«Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	1 տարի	
Միջոցառումներ «Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի գործունեության կազմակերպում	Ելքի ցուցանիշներ - Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 270 - Դասավանդվող առարկաների թիվ -11 - Դասարանների թիվը - 34 Մուտքի ցուցանիշներ - Աշխատակիցների թիվը – 63 - Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 73270,0 հազ. դրամ, համայնքի բյուջե 0,0 հազ. դրամ	«Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի դպրոց» ՀՈԱԿ	«Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն		
Ծրագիր 6.3. Մարզադպրոցի կառուցման աշխատանքների ավարտում (Ագարակ բնակավայր)					
Ծրագրի նպատակ.	Մատուցվող արտադարձողական կրթության ծառայության որակի բարելավում 10%-ով	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ		1 տարի	
Միջոցառումներ Համալիր մարզադպրոցի հիմնում Ագարակ քաղաքի նախկին կաթսայատան շենքի հիմքի վրա	Ելքի ցուցանիշներ - Մարզական խմբակների քանակ -7 - Խմբակներ հաճախող երեխաների թիվը – 400 Մուտքի ցուցանիշներ - Աշխատակիցների թիվը – 15 - Նոր կազմակերպության հիմնում -1 Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 113512,2 հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե- 34450.0 հազ. դրամ պետական բյուջե- 62062,2 հազ. դրամ մասնավոր հատված - 17000.0 հազ. դրամ	Նոր ձևավորվող ՀՈԱԿ, հաշվետվություններ, մոնիթորինգ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	
Ծրագիր 6.4. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգման 1-ին և 2-րդ փուլերի աշխատանքների ավարտում (Մեղրի բնակավայր)					
Ծրագրի նպատակ.	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության որակի բարելավում 20%-ով	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ		1 տարի	

Միջոցառումներ Մեղրի համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման 1-ին և 2-րդ փուլերի աշխատանքների ավարտում, ջեռուցման համակարգի ներդրում	Ելքի ցուցանիշներ ▪ Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 250 ▪ Հիմնանորոգված մանկապարտեզի շենք -1 Մուտքի ցուցանիշներ ▪ Աշխատակիցների թիվը – 63 ▪ ՀՈԱԿ-ների թիվը-1 ▪ Կապալային պայմանագիր -2 Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ <u>42645,1</u> հազ. դրամ, որից՝ համայնքի բյուջե-<u>13051,0</u> հազ. դրամ պետական բյուջե- <u>29595,1</u> հազ. դրամ	«Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Համայնքի ղեկավարի տեղակալ		
Ծրագիր 6.5. Մարզամշակութային կյանքի կազմակերպում և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
Ծրագրի նպատակ. ▪ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը ▪ Կազմակերպել համայնքի մշակութային կազմակերպությունների աշխատանքը	▪ Բնակիչների բավարարվածությունը մատուցվող մշակութային ծառայություններից 80% ▪ Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցության ակտիվացում 5%-ով	Հաշվետվություններ, մոնիթորինգի գնահատման արդյունքներ և	Մշակույթի ոլորտի կազմակերպիչ «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-տնօրեն	1 տարի	-
Միջոցառումներ ▪ Ապահովել համայնքում մշակութային կյանքի կազմակերպումը, հոգալ տոնական միջոցառումների հավուր պատշաճի իրականացումը ▪ Ապահովել գրադարանային ծառայության, երգի, ասմունքի, սպորտային ծառայությունների մատուցումը «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի միջոցով	Ելքի ցուցանիշներ ▪ Մշակութային միջոցառումների թիվը – 15 ▪ Միջոցառումներին մասնակիցների թիվը – 1000 ▪ Խմբակներ հաճախողների թիվը – 159 ▪ Մշակութային կյանքի ակտիվացում-5% Մուտքի ցուցանիշներ ▪ Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը – 29 ▪ Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ <u>41500,0</u> հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ <u>41500,0</u> հազ դրամ	Մեղրիի համայնքապետարան «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ			

Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն					
Ոլորտի նպատակ. Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը	Սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, 4%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	-
Ծրագիր 7.1. Սոցիալական աջակցություն անապահով խմբերին					
Ծրագրի նպատակ. Ապահովել սոցիալական աջակցության նպատակային և թիրախային իրագործումը	Համայնքում սոցիալապես անապահով խմբերի, կարիքավոր ընտանիքների վիճակի բարելավում 4%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	-
Միջոցառումներ Դրամական օգնություն	Ելքի ցուցանիշներ ▪ Աջակցություն ստացած սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող բնակիչներ -250 Մուտքի ցուցանիշներ ▪ Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ <u>6000,0</u> հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ <u>6000,0</u> հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան			
Ոլորտ 8. Փրկարար ծառայություն					
Ոլորտի նպատակ Նվազեցնել աղետների ռիսկերը արտակարգ իրավիճակների դեպքում	Աղետների ռիսկերի նվազեցում 5%-ով:	Մեղրիի համայնքապետարան	Համայնքի ղեկավար	1 տարի	-
Ծրագիր 8.1. Աղետների ռիսկերի նվազեցում					
Միջոցառումներ Արտակարգ իրավիճակների դեպքում տեխնիկական և նյութական աջակցություն	Ելքի ցուցանիշներ ▪ Աղետներից ստացված վնասների չափի մեղմում 5% Մուտքի ցուցանիշներ ▪ Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ <u>2000,0</u> հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ <u>2000,0</u> հազ. դրամ	Մեղրիի համայնքապետարան	Համայնքի ղեկավար	1 տարի	-

3. Համայնքային գույքի կառավարման 2022թ. ծրագիրը

2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՃՈՒՐԴՈՎ ԵՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 6

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակեր եսը քառ.մ	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակում ների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Ճանապարհներ ի, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդ ման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Գյուղատնտես ական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշներ ընդ, ագրոտեխնիկ ական պայմանները, հողատեսքը*	Մեկնարկ ային գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0011-0005-ից	1593.6	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	147 250
2	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0012-0009	554.2	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	51 210
3	Մեղրի համայնք, գյուղ	356.6	բնակավայրերի բնակելի	բնակելի տան կառուցման	չկա	չկա	--	32 950

	Նոնաձոր 09-066-0012-0017		կառուցապատման հողեր	համար				
4	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0012-0012	433.9	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	40 100
5	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0012-0011	269.1	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	24 860
6	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0012-0013	539.6	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	49 860
7	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0011-0001-ից	7934.2	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	733 130
8	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0011-0001-ից	1625.6	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	150 210
9	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0011-0001-ից	4170	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	385 310
10	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր	2334.1	բնակավայրերի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	չկա	չկա	--	215 680

	09-066-0007-0014 09-066-0007-0015		հողեր	համար				
11	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0012-0005 09-066-0012-0006	857.9	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	—	79 270
12	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0009-0023	371	բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	--	34 290
13	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0013-0001-ից	3329.6	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր>>	չորանոցի կառուցման համար	չկա	չկա	--	307 660
14	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0014-0001-ից	13189.7	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր>>	չորանոցի կառուցման համար	չկա	չկա	--	1 218 730

15	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0007-0002-ից	4342.2	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր>>	չորանոցի կառուցման համար	չկա	չկա	--	401 220
16	Մեղրի համայնք, գյուղ Նոնաձոր 09-066-0129-0001-ից	19403	գյուղատնտեսական այլ հողատեսք	Գյուղատնտեսակ ան գործունեություն իրականացնելու նպատակով	չկա	չկա	--	135 830
